



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թվականի N 188-Ա

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի N 13-Ն և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 02-ի N 64-Ն համատեղ հրամանով հաստատված զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի օրինակելի կանոնադրության՝ **որոշում եմ**.

1. Հաստատել զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝

1) *Առնակ Ավերիսյան* - նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) *Էվիլյա Ռաֆայելյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ,

3) *Հարություն Խաչատրյան* - անդամ - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Հրազդանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն (*համաձայնությամբ*),

4) *Լիլիթ Զաքարյան* - անդամ - «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (*համաձայնությամբ*),

5) *Նարինե Արրահամյան* - անդամ - «Նանե Բարեգործական Միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (*համաձայնությամբ*),

6) *Մարինե Հովակիմյան* - անդամ - «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության Կոտայքի մարզի համակարգող (*համաձայնությամբ*):

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի ապրիլի 10-ի «Զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու

և Հայաստանի Հանրապետության Կուրսայքի մարզպետի 2016 թվականի մայիսի 16-ի N 40-Ա կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47-Ա կարգադրությամբ հաստատված մարզային հանձնաժողովի գործունեությունը համարել դադարեցված:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2020 թվականի մայիսի 26
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ


